ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՏԻՆՅԱՆ ՀԵՆՐԻ ԱԶԱՏԻ

ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մովսիսյան Ֆելիքս Վազգենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Վիրաբյան Ամատունի Սասունիկի

պատմական գիտությունների թեկնածու
Բաղդասարյան Սերգեյ Արթուրի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. դեկտեմբերի 20-ին, ժամը՝ 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. նոյեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Խորհրդային Միության փլուզմամբ նորանկախ Հայաստանի Հանրապետության առջև ծառացան մեծաթիվ մարտահրավերներ՝ ավերիչ երկրաշարժի հետևանքներ, Արցախյան պատերազմ, էներգետիկ ճգնաժամ, սոցիալ-տնտեսական անկայուն իրավիճակ և այլն: Նորանկախ երկրում իրադրությունը բարելավելու առումով էական նշանակություն ուներ ինտեգրումը աշխարհի երկրների միջազգային համագործակցությանը: Կարևոր էր երկկողմ հարաբերությունների հաստատումը և զարգացումը եվրոպական առաջատար երկրների, այդ թվում՝ Լեհաստանի Հանրապետության հետ: Վերջինիս հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո պաշտոնական առնչություններում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում Արցախյան հարցի խաղաղ կարգավորումը, Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը, երկկողմ առևտրատնտեսական, ռազմական և գիտամշակութային համագործակցության ամրապնդումն ու զարգացումը:

1991-2018 թթ. Հայաստանի Հանրապետության անցած ժամանակաշրջանը բավարար է, որպեսզի պատմավերլուծական քննության ենթարկվեն հայ-լեհական դիվանագիտական, առևտրատնտեսական, գիտամշակութային կապերը, Լեհաստանում հայ համայնքի ձևավորմանն ու զարգացմանն առնչվող խնդիրները, արժևորվեն ձեռքբերումները, նշվեն ձախողումները, որոնք հիմք են ապագայում ավելի արդյունավետ քաղաքականություն վարելու համար: Այս համատեքստում, նշված ժամանակաշրջանի հայ-լեհական կապերի ուսումնասիրությունն ունի արդիական և կարևոր նշանակություն:

Ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության առարկան 1991-2018 թթ. հայ-լեհական դիվանագիտական, առևտրատնտեսական, ռազմական, գիտամշակութային կապերն են և Լեհաստանում հայ համայնքի կացությունը, որի ամբողջական պատմաքննության նպատակն է.

1) ներկայացնել 1991-2018 թթ. հայ-լեհական կապերի համապարփակ պատկերը,

2) վերլուծել և գնահատել նշված ժամանակաշրջանում հայ-լեհական առնչություններում արձանագրված հիմնական իրողությունները,

3) ուսումնասիրել 1991-2018 թթ. Լեհաստանի հայ համայնքի գործունեությունը, քննել 1990-ական թթ. Հայաստանից Լեհաստան արտագաղթի պատճառահետևանքային կապերը:

Ելնելով նպատակից՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1) Ուսումնասիրել և ներկայացնել հայ-լեհական դիվանագիտական հարաբերությունների հաստատման և 1991-2018 թթ. բազմակողմանի կապերի և առնչությունների պատմությունը, վերհանել երկկողմ հարաբերությունների զարգացման հիմնական միտումները, համեմատություններ անցկացնել Լեհաստանի և տարածաշրջանի մյուս երկրների հարաբերությունների միջև,

2) ներկայացնել և վերլուծել արցախյան հակամարտության հարցում հայ-լեհական հարաբերությունները, քննության առնել պաշտոնական Լեհաստանի

դիրքորոշումն այդ հարցում, բացահայտել նրա քաղաքականությունը խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ,

3) բացահայտել և քննել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում հայ-լեհական հարաբերություններում արձանագրված իրողությունները, վերլուծել և գնահատել Լեհաստանի Հանրապետության իշխանությունների, ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության և լեհահայ համայնքի գործունեությունը ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում,

4) ուսումնասիրել և վերլուծել Հայոց ցեղասպանության մասին 1991-2018 թթ. լեհական մամուլի հիմնական շեշտադրումները, քննության առնել լեհական իշխանությունների իրականացրած քաղաքականության հետ այդ հրապարակումների պատճառահետևանքային կապերը,

5) հետազոտել և վերլուծել 1991-2018 թթ. հայ-լեհական առևտրատնտեսական կապերը, բացահայտել երկկողմ ապրանքաշրջանառության զարգացման օրինաչափություններն ու հիմնական միտումները, համեմատություններ անցկացնել Լեհաստանի ու տարածաշրջանի մյուս երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների հետ,

6) քննության առնել հայ-լեհական ռազմական համագործակցության պատմությունը, բացահայտել արձանագրված հիմնական հաջողությունները, ձախողումները, գնահատել այդ համագործակցության նշանակությունը ՀՀ արտաքին քաղաքական և անվտանգային հիմնախնդիրների իրականացման համատեքստում,

7) ուսումնասիրել և բացահայտել հայ-լեհական մշակութային և գիտակրթական առնչությունների հիմնական դրսևորումները, ներկայացնել դրանց զարգացման առանձնահատկությունները, իրականացման եղանակները, տեսակները, համեմատություններ անցկացնել Լեհաստանի և տարածաշրջանի մյուս երկրների միջև նշված ոլորտներում համագործակցության հետ,

8) քննել և հետազոտել Լեհաստանում 1991-2018 թթ. հայկական նոր համայնքի ձևավորման պատմությունը, դրա առաջացման հիմնական պատճառներն ու պայմանները, ներգաղթած հայ բնակչության ինտեգրման և ներհամայնքային կյանքի առանձնահատկությունները:

Թեմայի ժամանակագրական շրջանակը: Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1991-2018 թվականները: Ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անկախությամբ սկսված հայ-լեհական դիվանագիտական, առևտրատնտեսական, գիտամշակութային կապերի և Լեհաստանում հայ համայնքի գործունեության համապարփակ լուսաբանման անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հետազոտությունը գրված է պատմավերլուծական, վերլուծահամադրական և պատմահամեմատական մեթոդներով: Ուսումնասիրության արդյունքում անաչառ ու անկողմնակալ վերլուծվել և քննվել են արցախյան հակամարտության կարգավորման, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերում հայ-լեհական համագործակցության արդյունքներն ու ձեռքբերումները, որի հիմնան վրա բացահայտվել և գնահատվել է նշված հարցերում

պաշտոնական Լեհաստանի դիրքորոշումը: Ներկայացվել և հետազոտվել են հայ-լեհական առևտրատնտեսական, ռազմական, մշակութային ու գիտակրթական շուրջ երեսնամյա առնչությունները, Լեհաստանում հայ համայնքի ձևավորման ու զարգացման պայմանները, քննության են առնվել արձանագրված հաջողություններն ու ձախողումները, վեր են հանվել դրանց պատճառահետևանքային կապերը, պատմության և ժամանակի համատեքստում գիտականորեն գնահատվել են արձանագրված իրողությունները:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայկական և լեհական բազմաբնույթ արխիվային հարուստ փաստաթղթերի, վավերագրերի, պաշտոնական գրությունների, գիտական սակավաթիվ հրապարակումների և մամուլի նյութերի խորազննին ուսումնասիրության արդյունքում առաջին անգամ մեկ ամբողջական և համապարփակ աշխատությամբ ներկայացվում են 1991-2018 թթ. հայ-լեհական քաղաքական, առևտրական, ռազմական, գիտական, կրթական և մշակութային կապերը, Լեհաստանում հայ համայնքի կազմավորման և գործունեության պատմությունը:

Ատենախոսությունն ունի գործնական-կիրառական արժեք, այն հնարավորություն է ընձեռում պարզաբանել հայ-լեհական արդի առնչությունների զարգացման միտումները, դասեր քաղել անցյալի պատմությունից, թույլ տրված սխալներից, չօգտագործված հնարավորություններից: Այն կարող է օգտագործվել ՀՀ բուհերի մասնագիտական ամբիոններում հատուկ դասընթացներ անցկացնելու, ինչպես նաև ՀՀ քաղաքական ու դիվանագիտական համապատասխան կառույցների գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու նպատակով:

Թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և աղբյուրագիտական հիմքը: Հայ-լեհական շուրջ երեսնամյա կապերի պատմությունը, որպես հիմնախնդիր և առանձին ատենախոսության թեմա, նախկինում հետազոտության չի ենթարկվել: Առանձին թեմաներ հատվածաբար ուսումնասիրվել են հայ և լեհ հեղինակների գիտական հոդվածներում: Ատենախոսության գիտական հիմնավորվածությունն ապահովելու համար հիմք են ծառայել արխիվային փաստաթղթերը, հայերեն, լեհերեն, ռուսերեն և անգլերեն լեզվով հրատարակված գիտական հոդվածները,պատմագիտական աշխատությունները, ուսումնասիրությունները, պաշտոնական հրապարակումները և մամուլի նյութերը:

Ատենախոսության համար առաջնահերթ կարևորություն են ներկայացնում արխիվային փաստաթղթերը: Փաստական նյութի և հիմնական թեմաների ուսումնասիրության համար առաջնային սկզբնաղբյուր են ծառայել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի[1], Հայաստանի ազգային արխիվի[2], ՀՀ ԱԳՆ

---

[1] **Մատենադարան**, Պատկանյանների արխիվ, g. 144:

[2] **Հայաստանի ազգային արխիվ** (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 326, g. 9, գ. 68; ֆ. 326, g. 9, գ. 188; ֆ. 326, g. 9, գ. 192; ֆ. 326, g. 9, գ. 193; ֆ. 326, g. 9, գ. 196; ֆ. 326, g. 9, գ. 197; ֆ. 326, g. 9, գ. 199; ֆ. 326, g. 9, գ. 204; ֆ. 326, g. 9, գ. 206; ֆ. 326, g. 9, գ. 214; ֆ. 326, g. 9, գ. 220; ֆ. 326, g. 9, գ. 221; ֆ. 326, g. 9, գ. 228; ֆ. 326, g. 9, գ. 229:

պատմադիվանագիտական արխիվի[3] վավերագրերը, ԼՀ արտաքին գործերի նախարարության հրատարակած տարեգրերը[4]:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքն ուսումնասիրելու և վերլուծելու, նրա ինքնիշխան առաջին քայլերը գնահատելու առումով կարևորել ենք Է. Մինասյանի[5], Է. Պողոսյանի[6], Ս. Մելքումյանի[7], Ա. Մարկոսյանի, Դ. Հախվերդյանի և Գ. Նազարյանի[8] աշխատությունները, որոնք հնարավորություն են ընձեռում բացահայտել նորանկախ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և արտաքին հիմնախնդիրները, դրանց զարգացման օրինաչափությունները:

Երկկողմ հարաբերությունների, ինչպես նաև Լեհաստանի հայ համայնքի պատմությունն ու ձևավորման առանձնահատկություններն ուսումնասիրելու և վերլուծելու տեսանկյունից կարևոր տեղ են հատկացվել հայագիտությամբ զբաղվող լեհ հետազոտողներ Կ. Ստոպկայի[9], Տ. Գրոմնիցկու[10], Յ. Կովալչիկի[11], Կ. Գոմուլկայի ու Ի.

---

[3] **ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ**, Եվրոպայի երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին (այսուհետ՝ ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ), գ. 1, գ. 222; գ. 2, գ. 113; գ. 3, գ. 213; գ. 3, գ. 214; գ. 3, գ. 215; գ. 5, գ. 32; գ. 7, գ. 60; գ. 7, գ. 61; գ. 8, գ. 40; գ. 9, գ. 26; գ. 10, գ. 51; գ. 10, գ. 52; գ. 11, գ. 25; գ. 12, գ. 36; գ. 12, գ. 37; գ. 13, գ. 50; գ. 15, գ. 37; գ. 16, գ. 42; գ. 19, գ. 57; գ. 19, գ. 58; գ. 20, գ. 47; գ. 20, գ. 48; գ. 21, գ. 5; գ. 22, գ. 2-Ե; գ. 22, գ. 7-ԸՕՓ; գ. 22, գ. 7-ԾՕՀ; գ. 23, գ. 5-Հ; գ. 23, գ. 6-ԾՕՀ; գ. 23, գ. 8-ԸՕՓ:

[4] **Kronika stosunków międzynarodowych Polski**, Rocznik Polskiej Polityki zagranicznej 1998, Warszawa, 1999. https://digit.pism.pl/dlibra/publication/182/edition/724# (մուտք՝ 17.05.2023); **Kronika stosunków międzynarodowych Polski**, Rocznik Polskiej Polityki zagranicznej 1999, Warszawa 2000. https://digit.pism.pl/dlibra/publication/182/edition/724# (մուտք՝ 17.05.2023); **Stosunki dyplomatyczne Polski.** Informator. Tom III. Azja, Zakaukazie, Australia i Oceania 1918-2009, Ministerstwo Spraw Zagranicznych, Archiwum/Wydawnictwo Askon, Warszawa 2010 (այսուհետ՝ Stosunki dyplomatyczne Polski).

[5] **Մինասյան Է.**, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2014; **Մինասյան Է.**, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003), Երևան, 2003:

[6] **Պողոսյան Է.**, Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Երևան, 2013:

[7] **Մելքումյան Ս.**, Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Երևան, 2002:

[8] **Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ.**, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան, 2002:

[9] **Stopka K.**, Ormianie w Polsce Dawnej I Dzisiejsej, księgarnia akademicka, Kraków, 2000; **Stopka K.,** Ormianie polscy: siedem wieków istnienia, Opracowania Tematyczne - Biuro Informacji i Dokumentacji. Dział Analiz i Opracowań Tematycznych; OT-655, Warszawa: Kancelaria Senatu, 2017.

[10] **Gromnicki T.**, Ormjanie w Polsce, ich historja, prawa I przywileje, Warszawa, 1889.

[11] **Kowalczyk J.**, Rekonstrukcja zabytków architektury w Zamościu, kwartalnik „Ochrona Zabytków", 46/3 (182), Warszawa, 1993.

Բորուչինսկա-Դերեշկիևիչի[12], Մ. Զակժևսկա-Դուբասովայի[13], Մ. Պավլիցկու[14], Կ. Կոտուլևիչ-Վիշինսկայի[15], Մ. Ժեյմոյի[16] ուսումնասիրություններին:

Հայաստանի Հանրապետությունից Լեհաստան 1990-ական թթ. արտագաղթի և նոր ձևավորվող հայ համայնքի գործունեության առանձնահատկություններն ու խնդիրները քննելու և վերլուծելու տեսանկյունից կարևորություն են տրվել Ռ. Կրուլ-Մազուրի[17] ուսումնասիրությանը, Ֆ. Մովսիսյանի[18], Մ. Զոնբեկի[19], Ի. Կալիշևսկայի[20], Դ. Կոլբայայի[21], Մ. Մաթևոսյանի[22], Գ. Շիմանսկա-Մատուշիևիչի[23] գիտական հոդվածներին, ինչպես նաև Լեհաստանի Հանրապետության Սեյմի հրատարակած վավերագրերին[24]:

Ատենախոսության համար, որպես սկզբնաղբյուր, էական նշանակություն ունի հայկական և լեհական պարբերական մամուլը: Երկկողմ դիվանագիտական-քաղաքական հարաբերությունների հետազոտության, հայ-լեհական մշակութային և

---

[12] **Gomółka K., Borucińska-Dereszkiewicz I.**, Stosunki Polski z Armenią, Azerbejdżanem i Gruzją na przełomie XX i XXI wieku, ISBN 978-83-8019-337-6, Toruń 2015.

[13] **Zakrzewska-Dubasowa M.**, Organizacja gminy ormiańskiej w Zamościu w XVI-XVII wieku, Rocznik Lubelski, t. 3, Lublin, 1960.

[14] **Pawlicki M.**, Odkrycie fundamentów kościoła ormiańskiego w Zamościu w 1968 roku, „Kwartalnik Architektury i Urbanistyki", Warszawa, 1980, t. 25/2.

[15] **Kotulewicz-Wisińska K.**, Przebieg współpracy gospodarczej między Polską a państwami Partnerstwa Wschodniego po 1992 roku: Nowa Polityka Wschodnia 2021, nr 2(29), ISSN 2084-3291, Wydawnictwo Adam Marszałek, 2021.

[16] **Жеймо М.**, Польские армяне со средневековья по настоящее время, Научный Арцах, №2(3), Ереван, 2019.

[17] **Król-Mazur R.**, Armenian Diaspora in Poland – an Outline of the Problem; Armenian Diaspora in Modern World: Factors of Changes, edited by Wojciech Bejda and Paweł Nieczuja-Ostrowski, ISBN 978-83-954212-3-5, Research Institute for European Policy, Gdańsk, 2020.

[18] **Մովսիսյան Ֆ.**, Հայ հասարակական կազմակերպությունների գործունեությունը Լեհաստանի Հանրապետությունում 1991-2017 թթ., «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, ԵՊՀ, Երևան, 2018, էջ 14-30; **Մովսիսյան Ֆ., Մատինյան Հ.**, Հայ համայնքի կացությունը Լեհաստանի Հանրապետությունում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, ISSN 1829-4804, Երևան, 2017, էջ 170-179:

[19] **Զոնբեկ Մ.**, Հայերը Լեհաստանում. նոր համայնք (1990-2007 թթ.), Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 130.1, Երևան, 2010:

[20] **Կալիշևսկա Ի.**, Լեհաստանում հայերի ադապտացիայի ռազմավարությունները, Բանբեր Երևանի համալսարանի, 3 (129), Երևան, 2009:

[21] **Կոլբայա Դ.**, Էջեր լեհահայերի պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, 3 (129), Երևան, 2009:

[22] **Մաթևոսյան Մ.**, Լեհաստանի հայ համայնքի դերը Հայաստան-Լեհաստան հարաբերությունների զարգացման գործում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2013:

[23] **Szymańska-Matusiewicz G.**, Abolicja jako element polskiej polityki migracyjnej: Biuro analiz sejmowych, ISSN 2082-0666, nr 19 (133), 24.10.2012, str. 1-4.

[24] **Kancelaria Sejmu**: Biuro Komisji Sejmowych: Pełny zapis przebiegu posiedzenia, Komisji Mniejszości Narodowych i Etnicznych (nr 28), 1 grudnia 2016 r.

գիտակրթական, Լեհաստանի հայկական ներհամայնքային կյանքի ուսումնասիրության առումով, բացի ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվի վավերագրերը, առաջնային դեր են վերապահվել «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի 1990-2018 թթ. հրապարակումներին[25], Հայ մշակութային ընկերության կողմից Կրակովում 2003 թվականից հրատարակվող Տեղեկագրին[26], Լեհահայերի մշակույթի և ժառանգության հիմնադրամի կողմից 2009 թվականից առայսօր հրատարակվող «Ավետիս» թերթին[27]: Հայոց ցեղասպանության և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի մասին պաշտոնական Լեհաստանի և լեհ հասարակության վերաբերմունքը վերլուծելու և գնահատելու տեսանկյունից արժեքավոր աղբյուրներ են հանդիսացել լեհական Ժեչպոսպոլիտա[28], Գազետա Վիբորչա[29], Ֆորում[30], Պոլիտիկա[31], Տիգոդնիկ Պովշեխնի[32] թերթերը:

Լեհաստանի և Հայաստանի հանրապետությունների երկկողմ պաշտոնական հարաբերությունների և դրանցում արձանագրված հիմնական իրողությունների, ինչպես նաև հարևան երկրների հետ ունեցած առնչությունների պատմահամեմատական քննություն անցկացնելու տեսանկյունից արժեքավոր են ՀՀ նախագահի[33], կառավարության[34], արտաքին գործերի նախարարության[35], պաշտպանության նախարարության[36], էկոնոմիկայի նախարարության[37], սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի[38], Լեհաստանում Հայաստանի դեսպանության[39], Լեհաստանի Հանրապետության նախագահի[40], կառավարության[41], Սեյմի[42], Սենատի[43], կենտրոնական բանկի[44] պաշտոնական կայքերում հրապարակված նյութերը:

---

[25] **«Հայաստանի Հանրապետություն»**, 1990-2018 թթ.:
[26] **Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturalnego**, Kraków, 1993-2018
[27] **Czasopismo ormiańskie Awedis**, 2009-2018.
[28] **Rzeczpospolita**: https://archiwum.rp.pl
[29] **Gazeta Wyborcza**: https://classic.wyborcza.pl/archiwum
[30] **Forum**: https://www.forumdwutygodnik.pl
[31] **Polityka**: https://www.polityka.pl
[32] **Tygodnik Powszechny**: https://www.tygodnikpowszechny.pl
[33] **ՀՀ նախագահի պաշտոնական կայք**. https://www.president.am
[34] **ՀՀ կառավարության պաշտոնական կայք**. https://www.e-gov.am
[35] **ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք**. https://www.mfa.am
[36] **ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք**. http://www.mil.am
[37] **ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք**. https://www.mineconomy.am
[38] **ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի պաշտոնական կայք**. http://diaspora.gov.am
[39] **Լեհաստանում Հայաստանի դեսպանության պաշտոնական կայք**. https://poland.mfa.am
[40] **Oficjalna strona Prezydenta Rzeczypospolitej Polskiej**: https://www.prezydent.pl
[41] **Serwis Rzeczypospolitej Polskiej**: https://www.gov.pl
[42] **Sejm Rzeczypospolitej Polskiej**: https://www.sejm.gov.pl
[43] **Senat Rzeczypospolitej Polskiej**: https://www.senat.gov.pl
[44] **Narodowy Bank Polski**: https://www.nbp.pl

Հայաստանի և Լեհաստանի միջև 1991-2018 թթ. առնչությունների վիճակագրական տվյալների հետազոտության և վերլուծության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի վիճակագրական կոմիտեի[45] և Լեհաստանի գլխավոր վիճակագրական գրասենյակի[46] տվյալները: Միջազգային կազմակերպությունների շրջանակներում արձանագրված հայ-լեհական առնչություններն ուսումնասիրելու և վերլուծելու համար օգտվել ենք Հայաստանում ՄԱԿ գրասենյակի հրատարակություններից[47], ԵԱՀԿ-ի[48], Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի[49] պաշտոնական կայքերից և համացանցային այլ աղբյուրներից, որոնք մանրամասն ներկայացված են օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի նիստում: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել համալսարանի Պատմության ամբիոնը:

Ատենախոսության հիմնական դրույթները, վերլուծություններն ու եզրահանգումներն հրատարակվել են ատենախոսի գիտական հոդվածների տեսքով և գիտաժողովներում:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, ութ ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության առարկան, նպատակը, խնդիրները, ժամանակագրական շրջանակը, ուսումնասիրության մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու աղբյուրագիտական հիմքը:

Ատենախոսության առաջին՝ **«Հայ-լեհական քաղաքական կապերը 1991-2018 թթ.»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլխում ներկայացվել են հայ-լեհական դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման ընթացքը, երկկողմ համագործակցության հիմնական միտումները, բարձր մակարդակի փոխայցելությունները, պաշտոնապես քննարկված հիմնական հարցերը, արձանագրված ձեռքբերումները: Երկրորդ ենթագլխում քննության են առնվել արցախյան հակամարտության կարգավորման հարցում Լեհաստանի Հանրապետության ստանձնած առաքելությունը, այդ կապակցությամբ հայ-լեհական, ինչպես նաև միջազգային համագործակցության տարբեր շրջանակներում արձանագրված իրողությունները: Երրորդ ենթագլուխը նվիրված է Հայոց

---

[45] **ՀՀ վիճակագրական կոմիտե**, ArmStatBank, https://statbank.armstat.am/

[46] **Główny Urząd Statystyczny**: https://stat.gov.pl

[47] **Միավորված Ազգերի Կազմակերպությունը Հայաստանում**, Երևան, 2003; **Միավորված Ազգերի Կազմակերպությունը Հայաստանում**, 15 տարի, Երևան, 2007:

[48] **Organization for Security and Co-operation in Europe (OSCE)**: https://www.osce.org

[49] **Parliamentary Assembly**: https://pace.coe.int

ցեղասպանության ճանաչման հարցում հայ-լեհական կապերին: Այստեղ ներկայացվել և վերլուծվել են այդ հարցում պաշտոնական Լեհաստանի դիրքորոշումը, լեհական իշխանությունների, Լեհաստանում Հայաստանի դեսպանության ու հայ համայնքի՝ Հայոց եղեռնի ճանաչման ու դատապարտման գործում հանդես բերած նախաձեռնությունները, մասնավորապես՝ 2005 թ. ապրիլի 19-ին Սեյմի ընդունած բանաձևը Հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ: Վերջին ենթագլխում հետազոտվել են այդ տարիներին լեհական առաջատար պարբերական մամուլում Հայոց ցեղասպանության մասին հրապարակումները, դրանց հիմնական բովանդակությունը, պատճառահետևանքային կապը լեհական իշխանությունների իրականացրած պաշտոնական քաղաքականության հետ:

Երկրորդ՝ **«Հայ-լեհական առևտրատնտեսական և ռազմական կապերը 1991-2018 թթ.»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջինում ներկայացվել և վերլուծվել են երկկողմ առևտրատնտեսական կապերը երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից մինչ 2018 թ.: Սկզբնական շրջանում այդ հարաբերությունները զարգանում էին առավելապես Լեհաստանից ապրանքների ներմուծման շնորհիվ, մինչև որ Հայաստանի Հանրապետությունը կայունացրեց ներքին տնտեսական իրավիճակը: 2000-ական թթ. երկկողմ տնտեսական ակտիվության ցուցանիշները դինամիկ աճ գրանցեցին, դիվանագիտական քննարկումներում առաջ եկան առաջին համատեղ նախաձեռնությունները, սկսեց գործել հայ-լեհական միջկառավարական տնտեսական հանձնաժողովը: Երկրորդ ենթագլխում հետազոտվել է երկկողմ ռազմական համագործակցությունը՝ քաղաքական-իրավական համագործակցությունից մինչ հայ-լեհական ռազմական արդյունաբերական կոնկրետ նախաձեռնություններ: Դրանց շարքում առանձնահատուկ էր հայ-լեհական առաջին ռազմական համատեղ ձեռնարկության՝ «Լյուբավա Արմենիայի» բացումը, որ, սակայն կարճ կյանք ունեցավ:

Երրորդ՝ **«Հայ-լեհական մշակութային և գիտակրթական կապերը 1991-2018 թթ.»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում ուսումնասիրվել են տարբեր բնագավառներում երկկողմ մշակութային համագործակցության հիմնական դրսևորումները, մասնավորապես՝ մշակութային կոթողների պաշտպանությունը, երկու երկրների մշակույթի, լեզվի ու գրականության տարածման համար նպաստավոր պայմաններ սահմանելը, մշակույթի գործիչների համար փորձի փոխանակումները, համատեղ մշակութային նախագծերի իրականացումը, երկու երկրներում կազմակերպված միջոցառումների մասնակցությունը: Երկրորդ ենթագլխում հետազոտվել է երկկողմ համագործակցությունը կրթության ու գիտության ոլորտում՝ երկու երկրների աշակերտների, ուսանողների, դասավանդողների ու գիտնականների համար հետազոտություններ իրականացնելու և փորձի փոխանակման նպաստավոր պայմաններ սահմանելուց մինչ կոնկրետ նախաձեռնություններ՝ ուսման կրթաթոշակային ծրագրեր երկու երկրների բուհերում սովորելու համար, հայ և լեհ գիտնականների մասնակցությամբ գիտական կոնֆերանսների, սեմինարների ու քննարկումների կազմակերպում:

Չորրորդ՝ **«Լեհաստանի հայ համայնքի կացությունը 1991-2018 թթ.»** գլխում հետազոտվել և վերլուծվել են Լեհաստանում հայ համայնքի սկզբնավորման ու զարգացման օրինաչափությունները՝ 1990-ականների արտագաղթից մինչ արդի միտումները: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ներկայիս լեհահայ համայնքի մեծամասնությունը կազմում են Խորհրդային Միության փլուզումից մինչ 1998 թ. Լեհաստանում հաստատված հայերը, որոնք սկզբնական շրջանում թույլ էին տալիս լեհական օրենքների խախտումներ և կարգազանցություն: Չնայած դժվարություններին՝ նրանց մեծամասնությունը ինտեգրվեց լեհական հասարակությանը, հեշտությամբ յուրացրեց լեհերենը, հարմարվեց հյուրընկալ երկրի օրենքներին ներքին ու ներքին կյանքին, իսկ մյուս մասը գերադասեց տեղափոխվել Արևմտյան Եվրոպայի բարեկեցիկ երկրները:

Եզրակացություններ: Հայ-լեհական շուրջ երեսնամյա բազմակողմ կապերի բացահայտման, դրանց իրական վիճակի գնահատման ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

1) Խորհրդային Միության փլուզումից հետո եվրոպական երկրների շարքում Լեհաստանի Հանրապետությունը առաջիններից մեկը 1991 թ. դեկտեմբերի 27-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց ի վեր միջպետական համագործակցությունը բնականոն զարգացում ապրեց՝ ի շահ երկու ժողովուրդների համար կենսական նշանակություն ունեցող ազգային նպատակների իրականացման:

2) Երկկողմ դիվանագիտական կապերում կարևոր դեր ուներ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցը, որում Լեհաստանի Հանրապետությունն ակտիվ դերակատարություն ստանձնեց 1998 թ. հունվարին՝ ԵԱՀԿ նախագահությունն ստանձնելուց հետո: Պաշտոնական Լեհաստանն իր քաղաքականությունն այս հարցում իրականացնում էր՝ ելնելով տարածքային ամբողջականության պահպանման և միջազգային վեճերը խաղաղ բանակցային ճանապարհով հանգուցալուծելու սկզբունքներից: Լեհական պարբերական մամուլում այս թեմայով գերիշխող հրապարակումներում Արցախը ներկայացվում էր որպես Ադրբեջանում «հայկական անկլավ», որը պայքարում էր իր ինքնորոշման իրավունքի ճանաչման համար: Եվրամիության անդամ դառնալուց հետո Լեհաստանի Հանրապետության դիրքորոշումն այս հարցում բխում էր Եվրամիության միացյալ հայեցակարգից: Արցախի վերաբերյալ միջազգային կառույցների կողմից քննարկվող բանաձևերին Լեհաստանը հիմնականում ձեռնպահ էր քվեարկում՝ արտահայտելով հակամարտության խաղաղ հանգուցալուծման հարցում իր որդեգրած չեզոք և հակամարտող կողմերին հավասարակշռելու մոտեցումը:

3) Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական հիմնախնդիր դարձավ 1998 թ. իշխանափոխությունից հետո: Այդ ժամանակից ի վեր Լեհաստանում ՀՀ դեսպանության, հայ համայնքի, հայկական եկեղեցական թեմերի, հայ մշակույթի համակիրների կողմից կազմակերպվեցին բազմաթիվ մշակութային, գիտական և ապրիլքսանչորսյան տարելիցի միջոցառումներ: Լեհական իշխանությունները որդեգրեցին պատմական արդարությունը

վերականգնելու և դրանով նմանատիպ հանցագործությունները կանխարգելելու սկզբունքային դիրքորոշում: Դրա վառ արտահայտությունը դարձավ 2005 թ. ապրիլի 19-ին ԼՀ Սեյմի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը:

4) Լեհական իշխանությունները հայ-լեհական դիվանագիտական քննարկումներում հանդես էին գալիս հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու հարցում միջնորդի դեր ստանձնելու պատրաստակամությամբ, որն իրականություն չդարձավ: Չնայած Հայոց ցեղասպանության դատապարտման հարցում քաղաքական-քարոզչական աշխատանքին՝ Լեհաստանի Հանրապետության Սենատի կամ Սեյմի կողմից նոր բանաձևի ընդունումը չհաջողվեց, որը պայմանավորված էր լեհահայ համայնքի ներսում գոյություն ունեցող հակասություններով, Հայ առաքելական եկեղեցու և Լեհաստանում ՀՀ դեսպանության կողմից ներհամայնքային խլրտումները և պառակտումը չկանխելով ու դրանք կառավարել չկարողանալով:

5) Լեհական պարբերական մամուլը 1990-ական թվականների սկզբից անդրադառնում էր Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին: Հատկապես մեծաթիվ հրապարակումներ եղան 2005 թ. Սեյմի՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումից հետո, ապրիլքսանչորսյան հիշատակի օրերին և Եղեռնի 100-ամյա տարելիցին: Հրապարակումների հիմնական ուղերձը կոչ էր Թուրքիային՝ առերեսվել պատմական եղելությանը, ճանաչել սեփական գործած եղեռնագործությունը, իսկ աշխարհին՝ դատապարտել և կանխարգելել նմանատիպ հանցագործությունների կրկնությունը:

6) Հայ-լեհական առևտրատնտեսական հարաբերությունները չզարգացան նույնքան ակտիվ, ինչպես քաղաքական համագործությունը: Լեհաստանից ներմուծումը կազմում էր երկկողմ ապրանքափոխանակության մեծագույն մասը, իսկ 1990-ական թթ. սկզբին Հայաստանից Լեհաստան արտահանումը գրեթե բացակայում էր: Լեհաստանի Հանրապետությունը 2012 թվականից ներդրումներ էր անում Հայաստանի տնտեսությունում, իսկ Հայաստանը Լեհաստանում ներդրում անելու նման հնարավորություն չուներ: Լեհական ընկերությունները հիմնականում հետաքրքրված էին հանքային և քիմիական արդյունաբերության ոլորտներում համագործակցությամբ:

7) Հայ-լեհական ռազմական համագործակցությունը եզակի երևույթ էր ՀԱՊԿ և ՆԱՏՕ անդամ երկրների միջև փոխգործակցության տեսանկյունից: Առաջին հայ-լեհական ռազմական համատեղ ձեռնարկությունը բացվեց Չարենցավանում՝ լեհական «Լյուբավա Արմենիա» ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցությամբ: Չնայած հայտարարություններին՝ ձեռնարկությունը կարճ կյանք ունեցավ և հեռացավ Հայաստանից 2018 թ. իշխանափոխությունից կարճ ժամանակ անց:

8) Հայ-լեհական մշակութային կապերը 1991-2018 թթ. հիմնվեցին երկու ժողովուրդների պատմական հարուստ ավանդույթների և ստորագրված միջկառավարական համաձայնագրի վրա: Երկկողմ փոխգործակցությունում կարևոր նշանակություն էին տրվում միմյանց տարածքներում գտնվող մշակութային ու

պատմական հուշարձանների պահպանությանը, երկու երկրների հետազոտողների և մշակութային գործիչների համար փորձի փոխանակման նպաստավոր պայմաններ ստեղծելուն: Երկկողմ մշակութային համագործակցությունն օբյեկտիվ պատճառներով ավելի ակտիվ էր Լեհաստանում, որտեղ հայկական համայնքի, հայ մշակույթի համակիրների և հայկական հասարակական և մշակութային կազմակերպությունների ջանքերով այդ տարիներին կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ:

9) Արդի շրջանում հայ-լեհական գիտակրթական կապերում, հիմք ունենալով ստորագրված միջկառավարական համաձայնագիրը, կարևոր նշանակություն տրվեցին երկու երկրների հետազոտողների, դասավանդողների և ուսանողների փորձի փոխանակմանը, երկու երկրների լեզվով, մշակույթով ու պատմությամբ զբաղվողների համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն: Լեհաստանի Հանրապետության՝ ԵՄ անդամություն ստանալուց հետո տարբեր կրթաթոշակային ծրագրերով շատ հայեր իրենց կրթությունը Լեհաստանում շարունակելու հնարավորություններ ստացան: Միևնույն ժամանակ Հայաստանում ուսում ստացող լեհ ուսանողների թիվը անհամեմատ պակաս էր: Լեհաստանում հայագիտությամբ զբաղվող լեհ գիտնականների դպրոցը այս շրջանում կարևոր դեր խաղած նորահայտ հայկական աղբյուրների, ձեռագրերի, վավերագրերի ուսումնասիրության և դրանց հիման վրա գիտական աշխատանքների հրապարակման գործում: Լեհաստանում կազմակերպվեցին Հայաստանին ու հայոց պատմությանը, մշակույթին, լեզվին նվիրված մի շարք գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, քննարկումներ: Այդ հարցում կարևոր նշանակություն ունեցավ Վարշավայում Արևելյան ուսումնասիրությունների կենտրոնի ստեղծումը:

10) Հայաստանից 1990-ական թթ. արտագաղթի արդյունքում բազմաթիվ հայեր, որոնց քանակը տատանվում էր 100-150 հազարի միջակայքում, հաստատվեցին Լեհաստանում: Սկզբնական շրջանում նրանք հայտնի էին լեհ իրավապահներին լեհական օրենքների կամա թե ակամա խախտումներով: 1998 թ. Լեհաստանի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ վիզային արտոնագրի համակարգ սահմանելուց հետո նրանցից շատերը դարձան անօրինական աշխատանքային միգրանտներ: Ժամանակի հայ-լեհական դիվանագիտական քննարկումներում այս հանգամանքն ուներ հույժ կարևոր նշանակություն:

11) Լեհական օրենքները խախտելու ու սև շուկայում աշխատելու հանգամանքն սկզբնական շրջանում անջրպետ էր ստեղծում հայկական «հին» և «նոր» համայնքների ներկայացուցիչների միջև: Չնայած այս հանգամանքին՝ արդի շրջանում գաղթած հայերի մեծ մասը կարողացավ ստանալ կացության իրավունք կամ օրինականացնել իր կարգավիճակը Լեհաստանում: Այս շրջանում ևս հայ համայնքը, ի հեճուկս մարտահրավերների, կարողացավ իրականացնել բեղուն գործունեություն:

Ատենախոսության թեմայի շրջանակում հեղինակի գիտական հրապարակումները.

1. Մովսիսյան Ֆ., Մատինյան Հ., Հայ համայնքի կացությունը Լեհաստանի Հանրապետությունում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, ISSN 1829-4804, Երևան, 2017, էջեր՝ 170-179:
2. Մատինյան Հ., Հայկական խաչքարերը Լեհաստանի Հանրապետությունում, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, ISSN 1829-4227, Երևան, 2018, էջեր՝ 176-185:
3. Մատինյան Հ., Հայ-լեհական ռազմական համագործակցությունը 1992-2018 թթ., Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, ISSN 1829-4804, Երևան, 2018, էջեր՝ 211-222:
4. Մատինյան Հ., Հայերի արտագաղթի խնդիրը Հայաստան-Լեհաստան հարաբերություններում 1990-ական թթ., Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, ISSN 1829-4804, Երևան, 2020, էջեր՝ 173-192:
5. Մատինյան Հ., Հայ-լեհական առևտրատնտեսական համագործակցությունը 1990-ական թթ., Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա, ISSN 1829-4804, Երևան, 2021, էջեր՝ 132-147:
6. Մատինյան Հ., Հայ-լեհական մշակութային համագործակցությունը 1991-2014 թթ., Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար և հասարակական գիտություններ 1, ISSN 2738-2915, Վանաձոր, 2022, էջեր՝ 250-262:
7. Մատինյան Հ., Ղարաբաղյան հակամարտության հարցը հայ-լեհական առնչություններում 1991-2018 թթ., Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հումանիտար և հասարակական գիտություններ 2, ISSN 2738-2915, Վանաձոր, 2022, էջեր՝ 192-211:
8. Մատինյան Հ., Լեհական մամուլը Հայոց ցեղասպանության մասին 1991-2018 թթ., Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտություններ 1, ISSN 2738-2915, Վանաձոր, 2023, էջեր՝ 201-212:
9. Մատինյան Հ., Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը հայ-լեհական առնչություններում 1991-2018 թթ., Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին: Հալեպի «Քարէն Եփփէ» ազգային ճեմարանի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ Գ, Երևան, 2023, էջ 148-166:

МАТИНЯН ГЕНРИ АЗАТОВИЧ
АРМЯНО-ПОЛЬСКИЕ СВЯЗИ В 1991—2018 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 20-го декабря 2024 года в 14^{00} часов на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Предметом диссертационного исследования являются армяно-польские связи на протяжении почти 30 лет (1991–2018 гг.), тщательное изучение которых имеет целью:

1. представить полную картину армяно-польских взаимоотношений в 1991–2018 гг.;
2. проанализировать и оценить основные реалии, зафиксированные в армяно-польских отношениях в указанный период;
3. исследовать деятельность армянской общины Польши в 1991–2018 гг. и рассмотреть причинно-следственные связи эмиграции из Армении в Польшу.

Диссертация состоит из введения, четырёх глав, восьми подглав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении представлены актуальность темы диссертации, предмет исследования, его цель и задачи, хронологические рамки, методология исследования, научная новизна и практическая значимость, степень научной изученности темы и библиографическая основа.

Первая глава диссертации, озаглавленная **«Армяно-польские политические связи 1991–2018 гг.»**, состоит из четырёх подглав. В первой подглаве представлен процесс установления и развития армяно-польских дипломатических отношений, основные тенденции двустороннего сотрудничества, взаимные визиты на высоком уровне, официально обсуждаемые вопросы и зафиксированные достижения. Во второй подглаве рассмотрена роль Республики Польша в урегулировании карабахского конфликта, реалии, зафиксированные в рамках армяно-польского и международного сотрудничества в этом вопросе. Третья подглава посвящена армяно-польским связям по признанию Геноцида армян, официальной позиции Польши по этому вопросу, инициативам польских властей, посольства Армении в Польше и армянской общины в деле признания и осуждения Геноцида армян, включая резолюцию Сейма от 19 апреля

2005 г. об осуждении Геноцида армян. В последней подглаве исследуются публикации о Геноциде армян в ведущей польской прессе того времени, их основное содержание и связь с официальной политикой польских властей.

Вторая глава, **«Армяно-польские торгово-экономические и военные связи 1991–2018 гг.»**, состоит из двух подглав. В первой подглаве представлены и проанализированы двусторонние торгово-экономические отношения с момента установления дипломатических отношений до 2018 года. Первоначально отношения развивались в основном за счёт импорта товаров из Польши, пока в Армении не стабилизировалась внутренняя экономическая ситуация, а в 2000-е годы двусторонняя экономическая активность начала динамично расти. Во второй подглаве исследовано двустороннее военное сотрудничество, включая создание армяно-польского предприятия «Любава Армения», которое просуществовало недолго.

Третья глава, **«Армяно-польские культурные и научно-образовательные связи 1991–2018 гг.»**, состоит из двух подглав. В первой подглаве исследованы основные направления двустороннего культурного сотрудничества: распространение культуры, языка и литературы двух государств, совместные культурные проекты, обмен опытом и участие в культурных мероприятиях. Во второй подглаве рассмотрено двустороннее сотрудничество в сфере образования и науки, включая стипендиальные программы, научные конференции, семинары и дискуссии.

Четвёртая глава, **«Положение армянской общины в Польше в 1991–2018 гг.»**, посвящена исследованию формирования и развития армянской новой общины в Польше. Большая часть нынешней армяно-польской общины сформировалась после распада Советского Союза. Несмотря на трудности интеграции, большинство армян освоили польский язык и законы, став частью польского общества.

В заключении подведены итоги исследования и изложены основные выводы.

MATINYAN HENRI AZAT

ARMENIAN-POLISH RELTIONS IN 1991-2018

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on December 20, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4)

SUMMARY

The subject of the dissertation research is Armenian-Polish relations over almost 30 years (1991–2018), the detailed study of which aims to:

1. present a comprehensive picture of Armenian-Polish relations from 1991 to 2018;
2. analyze and evaluate the main events and cases recorded in Armenian-Polish relations during the specified period;
3. study the activities of the Armenian community in Poland between 1991 and 2018 and examine the causes and effects of Armenian emigration to Poland.

The dissertation consists of an introduction, four chapters, eight subchapters, a conclusion, and a list of sources and literature.

The introduction presents the relevance of the dissertation topic, the subject of the study, its objectives, tasks, chronological framework, research methodology, scientific novelty, practical significance, the degree of academic investigation of the topic, and the bibliographic foundation.

The first chapter of the dissertation, titled **"Armenian-Polish Political Relations in 1991–2018",** consists of four subchapters. The first subchapter presents the process of establishing and developing Armenian-Polish diplomatic relations, the main trends in bilateral cooperation, high-level mutual visits, key officially discussed issues, and recorded achievements. The second subchapter examines Poland's role in resolving the Karabakh conflict and the realities within the framework of Armenian-Polish and international cooperation on this issue. The third subchapter is devoted to Armenian-Polish relations concerning the recognition of the Armenian Genocide, Poland's official position on this issue, the initiatives of Polish authorities, the Armenian Embassy in Poland, and the Armenian community in the recognition and condemnation of the Armenian Genocide, including the resolution passed by the Polish Sejm on April 19, 2005, condemning the Armenian Genocide. The last subchapter analyzes publications about the Armenian

Genocide in leading Polish periodicals of that time, their main content, and the cause-and-effect relationship with the official policy pursued by Polish authorities.

The second chapter, **"Armenian-Polish Trade-Economic and Military Relations 1991–2018",** consists of two subchapters. The first subchapter presents and analyzes bilateral trade and economic relations between the two countries from the establishment of diplomatic relations to 2018. Initially, these relations developed mainly through the import of goods from Poland until the domestic economic situation in Armenia stabilized, and by the 2000s, the indicators of bilateral economic activity showed dynamic growth, with the first joint initiatives emerging during diplomatic discussions, including the establishment of the Armenian-Polish Intergovernmental Economic Commission. The second subchapter examines bilateral military cooperation, from political and legal cooperation to specific Armenian-Polish military-industrial initiatives. Among them was the opening of the first joint Armenian-Polish military enterprise "Lubawa Armenia," which did not last long.

The third chapter, **"Armenian-Polish Cultural and Scientific-Educational Relations 1991–2018",** consists of two subchapters. The first subchapter explores the main aspects of bilateral cultural cooperation in various fields: from creating favorable conditions for the dissemination of the cultures, languages, and literatures of both countries, to the exchange of experience among cultural figures, the implementation of joint cultural projects, and participation in events organized in both countries. The second subchapter examines bilateral cooperation in the fields of education and science: from creating favorable conditions for students, teachers, and scholars of both countries to conduct research and exchange experience, to specific initiatives such as scholarship programs for education, scientific conferences with the participation of Armenian and Polish scholars, and the organization of seminars and discussions.

The fourth chapter**, "The Situation of the Armenian Community in Poland 1991–2018",** explores and analyzes the patterns of emergence and development of the Armenian community in Poland, from the emigration of the 1990s to modern trends. The study showed that most of the current Polish-Armenian community formed after the collapse of the Soviet Union until 1998. Armenians settled in Poland, initially facing challenges related to compliance with Polish laws. Despite the difficulties, the majority of them integrated into Polish society, mastering the Polish language and adapting to the laws of the host country.

In the conclusion, the results of the study are summarized, and its main findings are presented.